

ՀԱՄՇԵՆՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար

ՀԱՅՐԻ ԷՐՍՈՅ ՀԱՄՇԵՆՅԻ ԲԻԼԱԼ ՔԵՌԻՆ

ԹԱՐԳԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Գրող, պատմաբան Հայրի Էրսոյը 1990թ. Ստամբուլում հիմնադրել էր «Նարոտ» հրատարակչությունը, ինչպես նաև հրատարակում էր «Ալաշարա» անվամբ մշակութային հանդեսը: Նա հյուսիսկովկասյան համայնքի «վերադարձի» շարժման ներկայացուցիչներից է, որոնք համոզված են, որ Թուրքիայում հյուսիսկովկասցիները դատապարտված են ծուլման և միակ փրկությունը հայրենիք՝ Հյուսիսային Կովկաս վերադառնալն է: Այդ իսկ պատճառով ազգությամբ արթնազ Հայրի Էրսոյը 2006թ.-ից մշտապես բնակվում է Արխագիայում՝ ստանձնելով Թուրքիայում ապրող հայրենակիցների հետ կապի ապահովման գործը: Արխագիայի գրողների միության անդամ է: Ներկայացվող պատմվածքը հեղինակը փոխանցել է ինձ 2005թ.-ին և այն իր մանկության հուշերից է՝ չերքեզական գյուղում ապրող մի համշենցի հայի մասին:

ՄՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ

թուրքագետ, պատմական գիտ. դոկտոր

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայրի Էրսոյի «Համշենցի Բիլալ քեռին» պատմվածքը թուրքերենից թարգմանելու և մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում թուրքագետ, պատմ. գիտ. դոկտոր Արսեն Ավագյանին, և ցանկանում ենք մեր ընթերցողներին որոշ լրացուցիչ տեղեկություններ հայտնել Հ. Էրսոյի մասին: Նա ազգությամբ արթնազ է, մասնագիտությամբ՝ շինարար-ճարտարագետ, ավարտել է Ստամբուլի տեխնիկական համալսարանը: Ծնվել է 1959թ. Թուրքիայի Դյուզդեի նահանգի Աբջաքոջա գավառի Էսմահանըմ գյուղում, որը, ինչպես ներկայացվող պատմվածքում հեղինակն է գրում, համշենցի Բիլալ քեռու գյուղից շատ հեռու էր: Իրոք, Աբջաքոջա գավառում համշենցիների մի քանի գյուղ կա, որոնց բնակիչները այդտեղ են գաղթել հիմնականում 19-րդ դարում:

Հայրի Էրսոյը մի քանի գրքի հեղինակ է, այդ թվում՝ արթնազների (չերքեզների) պատմության մասին պատմող գիտական և գեղարվեստական գրքերի: Նա 1990թ. Ստամբուլում թուրքերեն է հրատարակել Արխագիայի գրողների միության նախագահ, 1958-1978թթ. Արխագիայի Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, նշանավոր գրող Բագրատ Շինկուբայի «Վերջին ուրիշը» պատմավեպը, որը «Եռանգամներից վերջինը» վերնագրով 1978թ. հայերեն թարգմանությամբ հրատարակվել է նաև Երևանում: Այն պատմում է ցարական Ռուսաստանի գրավյալ տարածքներից Թուրքիա գաղթած հյուսիսկովկասյան փոքրաթիվ ուրիշ ժողովրդի դառը ճակատագրի մասին, որի բոլոր ներկայացուցիչները ծուլվել են, և միայն մի ծերունի է հիշում մայրենի լեզուն:

Ահա, ծուլման այս վտանգն է ստիպել նաև Հայրի Էրսոյին 2006թ. վերադառնալ նախնայաց հայրենիք՝ Արխագիա, որտեղ նա շարունակում է ստեղծագործել:

ՄԵՐԳԵՅ ՎԱՐՂԱՆՅԱՆ

Գյուղում մեր հարևանն էր համշենցի Բիլալ քեռին: Քանի որ երկար տարիներ են անցել, եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, ինը երեխա ուներ: Լսել էի, որ նա մեր գյուղի բնիկներից չէ, հետագայում է այստեղ տեղափոխվել: Պետք է, որ իմ ծնվելուց երեք-հինգ տարի առաջ տեղափոխված լիներ, որովհետև ինձ և շրջապատիս ճանաչել սկսելու պահից Բիլալ քեռին և երեխաները, ընտանիքիս և իմ տարեկից էին:



Հայրի Էրսոյ

Բիլալ քեռին երեք տղա և շատ վստահ չեմ, կարծում եմ, վեց աղջիկ ուներ: Աղջիկներին լավ չհիշելու պատճառը կայանում է նրանում, որ նրանցից շատերը մինչև իմ ծնվելը ամուսնացել և հեռացել էին գյուղից:

Բիլալ քեռու երեխաներից առաջնեկը և վերջին երկուսը տղա էին, իսկ մյուսները՝ աղջիկ: Վերջին երկու երեխաներից Սինանը ինձանից ութ ամիս մեծ էր, իսկ Երսիլը՝ ութ ամիս փոքր: Չնայած որ եղբայրներ էին, չի կարելի ասել, որ շատ մտերիմ էին: Իրականում դա մեր գյուղի հիմնադիրների հարյուր տարի առաջ Կովկասից բերած և դեռևս գոյություն ունեցող ավանդույթ է: Մեր եղբայրների և մեծերի միջև տարիքային տարբերությունը ինչքան էլ որ լինի, հարգանքի վրա հիմնված մի համակարգով էինք ապրում և մեծ եղբայրների ու քույրերի՝ մեր նկատմամբ ունեցած բացարձակ հեղինակությունն ի սկզբանե ընդունում էինք: Նրանց հետ վիճաբանելը, խոսքերին հակառակվելը աններելի մեղք էր համարվում: Որովհետև տարիքային տարբերությունն ինչքան էլ որ լինի, մեծերի հետ չի կարելի վիճել, միայն պետք է ենթարկվել նրանց խոսքերին: Չնայած որ նույն տան էինք ապրում, ընկեր չէինք կարող լինել, միասին չէինք կարող խաղալ, խաղընկեր գտնելու համար շատ փոքր տարիքից ընտանիքի անդամներից դուրս ընկեր էինք սկսում որոնել: Ով գիտի, միգուցե այդ փնտրությունները նպաստում էին մեր վաղ հասարակացմանը և ընտանիքից դուրս մարդկանց հետ «լեզու գտնելու» ունակության ձեռք բերմանը: Մենք հինգ եղբայր էինք և հինգ առանձին ընկերական խումբ գոյություն

ուներ: Ոչ ոք մեծին կամ փոքրին իր ընկերական խմբում որպես ընկեր չէր կարող ընդունել: Օրինակ՝ մեծ եղբայրս իմ ընկերների հետ հանդիպելիս նրանց լավ էր վերաբերվում, ոտքի վրա խոսակցություն ունենում, սակայն ընկերություն չէր անում: Ընկերներս նույնպես մեծ եղբորս հետ հարաբերություններում հատուկ ուշադրություն էին դարձնում որ այն լինի որպես մեծի և փոքրի հարաբերություններ: Ես նույնպես եղբորս ընկերական խմբի հետ նույն կերպ էի վարվում:

Միգուցե նախկինում Բիլալ քեռու ընտանիքն այդ և նման ավանդույթները տարօրինակ էին դիտում և դժվարանում ընկալել, սակայն ժամանակի ընթացքում մերվել էին: Սինանն ու Երսիլը քանի որ մեր գյուղում էին ծնվել, այդ հարաբերություններում էին մեծացել: Կարճ ասած՝ չնայած, որ նրանց միջև տարբերությունը կայանում էր տասնվեց ամիս, նրանք ոչ թե ընկերներ էին, այլ միայն եղբայրներ: Դրա դիմաց տարիքի պատճառով երկուսն էլ լավ ընկերներս էին: Առավոտյան երկու եղբայրներից ով ավելի շուտ էր գալիս ինձ մոտ, օրվա ընթացքում իմ ընկերն էր դառնում, մյուսը ստիպված էր այլ ընկեր կամ ընկերներ գտնել: Ոչ շատ հաճախ, բայց լինում էր որ միասին էին

գալիս: Այդ օրերը տարբերվում էին մյուսներից և երեքս միասին էինք խաղում:

Պետք է խոստովանեմ, որ խաղերի տեսակետից շատ մեծ ընտրություն չունեիք: Կամ գետի մոտ գնալով փորձում էինք ձուկ բռնել, կամ ավտոմեքենաների նման քարեր գտնելով, ավագից պատրաստված ճանապարհների մեջ դրանք էինք քշում: Վերջիվերջո, երեքս էլ երեխա էինք, և Սինանն ու Երսիլը միասին խաղալուց մեծ եղբայր-եղբայր հանդիսանալը մոռանում էին և գյուղի օրենքներին հակառակ, հաճախակի վիճաբանում էին: Այդ վիճաբանություններում, բնականաբար, մեծ եղբոր հետ վիճող և ավանդույթներին հակառակ գործող Երսիլը վնասով էր դուրս գալիս, հոր կամ մոր կողմից պատժվում: Վերջապես սպասվածը տեղի ունեցավ՝ Երսիլը հասկանալով, որ ի տարբերություն մեծ եղբոր, չի կարող շարունակել ընկերություն անել ինձ հետ, և, իրեն այլ ընկերներ գտնելով, մեզանից առանձնացավ: Արդեն ես միայն Սինանի հետ էի ընկերություն անում: Բնականաբար, Երսիլնի համար էլ մեծ եղբայր դարձա:

Բիլալ քեռին և ընտանիքը իրար միջև խոսելիս «համշենցիներն» կոչվող լեզու էին օգտագործում: Իրականում թուրքերենից բացի այլ լեզու օգտագործելը մեր գյուղում և նույնիսկ նահանգում շատ տարօրինակ բան չէր: Քանի որ Անատոլիայի այդ նահանգում բնակություն էին հաստատել տարբեր էթնիկ արմատներ ունեցող խմբեր, որոնք գաղթել էին Բալկաններից և Կովկասից «93 թվականի պատերազմ» անվամբ հայտնի 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, ապա թուրքերենից բացի շրջանի

ընտանիքները խոսելիս բազմաթիվ լեզուներ և բարբառներ էին օգտագործում:

Մեր գյուղում բոլոր բնակիչների շփման ընդհանուր լեզու հանդիսացող թուրքերենի հետ մեկտեղ, քանի որ գյուղի հիմնադիրները հիմնականում Արխագիայից գաղթածներն էին, օգտագործում էին արթնազերենը, կամ ինչպես այն հայտնի է Թուրքիայում, արթնազերենը, դրանից բացի խոսում էին վրացերեն և լազերեն: Սակայն «համշենցիներն» խոսող միակ ընտանիքը Բիլալ քեռու ընտանիքն էր:

Ես հետագայում իմացա, որ Բիլալ քեռու ընտանիքը մեր գյուղ անձամբ իմ հայրն է բերել և բնակեցրել: Բիլալ քեռին հորս զինվորական ընկերն էր: Չորացրվելուց հետո ևս նրանց ընկերությունը չի ընդհատվել: Քաղաքացիական կյանքում էլ հաճախակի հանդիպում էին, մեկ հայրս էր համշենցի Բիլալ քեռու գյուղ գնում, մեկ նա էր մեր գյուղ գալիս: Այդ այցելությունները շարունակվեցին մինչ այն դժբախտ պատահարը, որ փոխեց Բիլալ քեռու ամբողջ կյանքը:

Իր գյուղում երջանիկ կյանք վարող Բիլալ քեռու և նրա ընտանիքի միստուկացը, անսպասելի մի դեպքի պատճառով ամբողջովին խախտվեց. Բիլալ քեռու եղբայրը որսի ժամանակ տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում սպանեց հարևանի տղային և երկու ընտանիքների միջև արյան վրեժ սկսվեց: Արդարադատությունը միջամտեց և սպանություն կատարած եղբորը ծերբակալեցին ու բանտարկեցին, սակայն զոհվածի ընտանիքը դա բավարար չհամարելով, դեպքը ցանկացավ վերածել արյունակցական վրեժի:

(շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՌՈԶԱ ԽԱՍՏՅԱՆ

Աղբյուրական Հանրապետություն, ք. Մայկոպ

ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՄԻ ԿԱԹԻԼ ՅՈՒՂ ՀԱՆԳՉՈՂ ԿԱՅԾԻՆ

Մի կաթիլ յուղ հանգչող կայծին
Թող բռնկվի սիրո հուրը,
Տխրությունն այս հանեց հոգիս,

ՏԻԵԶԵՐԸՈՒՄ ԱՐՉԱԳԱՆԸ ՉԿԱ

Ոչինչ չասացիր:
Շարժումով գլխի
Հրաժեշտ տվիր
Ու անհետացար:

ԱՄՊԻ ՆՍԱՆ

Մայրամուտի բարակ մի շերտ
Երկու կես իմ երկինքն արեց:
Ամպե ծաղիկն անձեռակերտ
Եկավ ու իմ գլխին թառեց:

Երկու կես իմ կյանքն արեց,
Ապրել ինչպե՞ս շարունակեմ,
Երբ սուտը քո՝ Հոգիս մորթեց:

ԵՐԿՈՒ ՍՏՎԵՐ

Ամառ է: Ցուրտ է: Մտքի խավարում:
Անիմաստության գոյածածկույթ է
ամբողջ աշխարհում:
Անտուն ու անտեր երկու տխուր
ստվեր փողոց են ընկել,

«Իսկ ես փող չունեմ» - դու ես
գլխիկոր ինձ պատասխանում:
Ու խավարի մեջ, չհասկանալով, թե
ինչն՝ ինչոց է,

ՇԱՏ ԵՆՔ ՈՒՇԱՅԵԼ...

Մեր հանդիպումը ինչպե՞ս
անվանենք,-
ճակատագրի խա՞ղ,
Չար կատա՞ղ բախտի,

Ա՛խ,
Անժամանակ եկավ այս սերը,
Լա՛վս, սիրելի՛ս...
Ու նույնիսկ,
Եթե,

Ոչ դու, ո՛չ ես
Մեկնեկու համար
Հուշեր լինելու
Բախտ չենք ունեցել...
Շա՛տ ենք ուշացել...

ԱԿԱՆ

Չականագերծված
Ական կա ներսում
Տրոփող սրտիս,
Ու սպասում է այն
(Ան)հարմար պահի,

Վայն եկավ-տարավ...
Քեզ, որ այդ պահին
Ճակատագրի քմահաճույքով
Եղար իմ կողքին...

ԳԵՏ ԻՍԱՍՏՈՒԹՅԱՆ, ՉՀԱՂԹԱՀԱՐՎՈՂ

Փորձառությունն իմ ընկճված լռեց,
Չեռքերն էր ջարդում

Խոհեմությունս երբ որ ինձ լռեց
Ու գահ բարձրացավ
հիմարությունս...

Իմաստությունը ճամփա է երկար,
Կյանքում լինում են պահեր
անմեկին,

Ինչպես որ այսօր, ինչպես որ հիմա,-
Ծարավից մեռա՞ գլխին աղբյուրի...
Մեղադրանքից հեշտ ի՞նչ կա
աշխարհում,

Միրոս ճզմեցին կշտամբանքները,
"Մեղայի" հրով խելքս են վառում
Ուշացած ու խեղճ իմ արցունքները...

Իմաստությունը գետ է վարարում,
Նա հազվադեպ է լինում պարզ ու
ջինջ

Լողալ չգիտե՞ս՝ հեռացիր իսկույն,
Կամ իսկույն խեղդվի՛ր, ելք չկա
ուրիշ:

Փորձառությունն իմ ընկճված լռեց,
Չեռքերն էր ջարդում
անփորձությունս,

Խոհեմությունս երբ որ ինձ լռեց
Ու գահ բարձրացավ
հիմարությունս...

ՋՕՄՈԱ

Ջօմպուս վրդըն խիջ ու խօխօլ,
Ժօմպուս էքսաֆը՝ լիկը փուշ,
Վէ՛վ էր, կուզէր օր քօվը կօմ,
Լաֆէր գասէր խաս ու օնուշ:

ՃԱՍՓԱ

Ճամփիս վրա խաչընդոտներ,
Ճամփիս կողքին՝ տատասկ ու փուշ,
Ո՞վ էր ուզում, իր մտա լինեմ,

Խոսքեր ասում քաղցր, քնքուշ:
Մարդը պիտի փոքրությունից
Հասկանա իր անելիքը,
Որ մեծանաս, ժամանակը
Ինքը կասի ասելիքը:

ԱՐԷՎ ԱԽՆԻԳ

Արեվին հեղ ճ'ա'հօղ ախճիգ,
Արեվին բէս գարմիր ախճիգ,
Արեվըն 'ա'լ օնուշ ախճիգ,
Կօլէծիր գիս:

ՍԱՐԷՅՆ ԷԼԼԻՄ ՔՕՄԻ ՏԱՌՆՕՄ

Թե՛զ վիր էլլիմ էկուծ 'ա'կըն,
Էշուօ սարը տիմաճի,
Միղըս սարէրը քաշ'ա' գու,
Սարէծի իմ, հասկընծի:

ՍԱՐԵՐԸ ԵԼՆԵՄ, ՔԱՄԻ ԴԱՌՆԱՄ (Քարգանություն)

Շուտ վեր կենամ վաղն առավոտ,
Գնամ սարը դիմացի,
Միրոս սարերին է կարոտ,
Սարեցի եմ, հասկացի՛ր:

* Համշենի բարբառի Ջենիգի (Տրապիզոնի նահանգի Մամսուն-Օրդուի տարածաշրջանի) խոսվածքին հատուկ ա ձայնավորը տպագրում ենք 'ա':

ՄԱՐԴ ԼԻՆԵԼՈՒ, ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԼԻՆԵԼՈՒ, ԹԵ՞ ԹՈՒՐԶ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՄԱԶԵՄ. ԹՈՒՐԶ ԼՐԱԳՐՈՂՆ ԱՆԻԾՈՒՄ Է

Պոլսեցի լրագրող Օսման Բալջըզի-լը Haber 3 կայքում հոդված է հրապարակել՝ անիծելով թուրքալի հայկական որբանոցը ոչնչացնելու որոշում կայացնողներին և դա իրականացնողներին:



1500 երեխաների ճակատի քրտինքի վրա, հափշտակեցին մեր՝ երեխաների աշխատանքը:

Եթե այն աղքատ երեխաների համար դարձյալ որբանոց դարձնեն՝ անկախ ինքնությունից, աղքատ կամ հաշմանդամ երեխաների համար որպես ճամբար օգտագործելին, իմ իրավունքը հալալ կանեի նրանց, բայց այս պայմաններում հալալ չեն անում:

Եվ հիմա արդեն ավերակ է դարձել մեր ստեղծածը՝ թուրքալի աղքատ երեխաների ճամբարը, մեր «Ատլանտիդա քաղաքակրթությունը»:

Հիմա արդեն, երբ չկան երեխաների ծվոցները, ցամաքել է նաև փոսի ջուրը... Ենթի ուսերը կախ են...

Հողը՝ ամուլ... Ծառերը՝ դժգոհ...

Իսկ իմ վրդովմունքի գագաթնակետի թռիչքներն այնքան սուր են, ինչպես ծիծեռնակինը, որի՝ ամենայն զգուշությամբ սարքած բույնը մեկ հարվածով ոչնչացվել է:

Սակայն՝ ապարդյուն...»:

Դինքի այս հոդվածն ընթերցելուց հետո, բնականաբար, շատ տխրեցի, նաև մտածեցի՝ ուրեմն նա էլ ինձ նման Գեղիքիաշայում է մեծացել:

Նա էլ ինձ նման Քունքափուում է սովորել լողալ, գնդակ է խաղացել Ջինջի հրապարակում, հեծանիվ քշել և երևի սահնակով սահել Գեղիքիաշայի գառիվերից մինչև Չիֆթե Գելինլեր (Ջույզ հարսներ) փողոց

Ուրեմն հիմա քանդում են նրա փոքրիկ ծեռքերով կառուցված թուրքալի հայկական որբանոցը... Աստված իմ, այս ի՞նչ մեծ ամոթ է: Մա՞րդ լինելու, մուսուլմա՞ն լինելու, թե՞ թուրք լինելու համար ամաչեմ:

Շատ չանցած՝ այս տարածքում էլ իսլամական ինքնությամբ աչքի ընկնող քաղաքական իշխանության «գործարարները» շքեղ առանձնատներ, առևտրի կենտրոններ և երկնաքերներ կունենան, իրենց հարստությանը հարստություն կավելացնեն:

Չեք կբերեն մի նոր կեղտոտ եկամուտ:

Թող ձեր աչքին, ծնկին կանգնի (թուրքերեն անեծք՝ օգտագործվում է ապերախտ մարդկանց համար):

Իմ իմացած բոլոր հայիոյանքները ձեզ են ուղղում,

Իմացած բոլոր անեծքները՝ ևս:

Աստված ձեր գլխին փորձանք բերի: Թող հողը ձեր աչքը կշտացնի (թուրքերեն՝ օգտագործվում է ազահ, աչքածակ մարդկանց համար):

Էլ ի՞նչ ասեն:

*Թարգմանությունը՝
ՍՐԱԶ ԳԱՅՍԱԳԱՍՅԱՆԻ*

Լրագրող, գրող Օսման Բալջըզի-լը ծնվել է 1955 թ. Պոլսում: Երկար տարիներ աշխատել է Hürriyet, Cumhuriyet և թուրքական այլ հայտնի թերթերում ու հեռուստաալիքներում: 1988 թ. ստացել է թուրքիայի Լրագրողների ասոցիացիայի «Տարվա լրագրող» մրցանակը:

ԱՍՏՎԱԾ ԶԵՐ ԳԼՍԻՆ ՓՈՐՉԱՆՔ ԲԵՐԻ

Սիրում եմ հայերին, Այն էլ՝ շատ, Շատ պատճառներ ունեմ՝ սիրելու: Չորս տուն թուրք, 50-60 տուն էլ հայ բնակիչ ունեցող Գեղիքիաշայ փողոցում եմ մեծացել:

Աշխարհի չափ հայ եղբայր՝ ախպարիկ և քույր եմ ունեցել:

Օրինակ՝ մանդոլինայի առաջին դասընթացներս ստացել եմ Ավետիս եղբայրից:

Երբ նկատել էր առաջընթաց, ձեռքիցս բռնած՝ ինձ տարել էր Սուրբ Մեսրոպյան եկեղեցի, ինձ տեղավորել իր դեկավարած նվագախմբում և երգչախմբում:

Այդ ժամանակ մեծ հայրս դեռ ողջ էր, ընդ որում՝ նաև մեծ մայրս, և ընտանիքիս բոլոր մեծահասակներն անգամ մտածել էին՝ արդյոք կմնամ քրիստոնեության ազդեցության տակ:

Հիշում եմ ինչ հաճույքով էի դիտում Ակոբ (Հակոբ) հորեղբոր՝ իր տան առաջ հիմնած տիկնիկային թատրոնի ներկայացումները:

Շատ էի հավանում նրա ձեռքերով պատրաստված փայտե տիկնիկներն ու դրանց համար նրա կնոջ կարած շորերը: Վարպետն իր ապրուստն էր վաստակում՝ տանիքի ջրատարներ վերանորոգելով:

Մի օր հենց մեր հետևի թաղում աշխատելիս ընկավ տանիքից:

Մահացավ: Եթե մտերիմիս կորցնեի՝ գուցե նույնքան տխրեի:

Երբ մեծ հայրս մահացավ, մեր հայ հարևանները 7 օր ճաշ բերեցին մեր տուն:

Չգիտեմ՝ հայկակա՞ն, թե՞ թուրքական սովորույթ էր դա, բայց չեմ էլ ցանկանում իմանալ:

Մանկուց «մենք» և «նրանք» հասկացությունը մեր մտքով երբեք չէր անցնում:

Զատկին մեր տունը լցվում էր գունավոր հավկիթերով և գատկական կարկանդակով:

Հուր ու համը դեռ հիշողությանս մեջ է: Չեմ մոռացել մեր հավկիթախաղը փողոցի անկյուններում, գիպսից չկոտրվող հավկիթներ պատրաստելու մեր փորձերը:

Դարոցական տարիներին հարսանիքներում նվագելու համար խումբ էինք հիմնել:

Խմբի միակ թուրքը ես էի: Նվագում էինք թե՛ հայկական, թե՛ թուրքական հարսանիքներում:

Չգիտես՝ ինչու, հիշողությանս մեջ մնացել է այդ ժամանակվա հայտնի՝

«Սուտ է, սուտ է» երգը, որը շատ լավ էինք նվագում:

Ա՛յ եղբայր, մարդ գոնե մեկ անգամ չի՞ զգա, որ տարբեր էթնիկական ծագում կամ կրոն ունի:

Չզգացի: Սիրում էինք իրար, և դա մեզ բավարար էր:

Օրերն իրար հաջորդեցին...

Դարձել եմ երիտասարդ տղա, թռել եմ բնից:

Ամեն անգամ հայրական տուն այցելելիս տեղեկանում էի, որ մեր հայ հարևաններից ևս մեկը վաճառել է տունն ու տեղափոխվել:

Մեր հարևանները հիմնականում տեղափոխվում էին Քուրթուլուշ (Անկախության փողոց՝ Կ.Պոլսում):

Այս ընթացքում ամեն մի կորուստը տխրեցնում էր հորս ու մորս:

Երկար չտևեց՝ ընտանիքս իր հայ հարևանների հետևից տեղափոխվեց Քուրթուլուշ:

Մորս ու հորս վերականգնված տրա-



մադրությունն ու երջանկությունը տեսանրանց աչքերում:

Առավոտյան սուրճերն ու երեկոյան թեյերը վերադարձել էին:

Եվ, իհարկե, հաճելի գրույցներն ու հին օրերի հիշողությունը...

Քիչ առաջ թերթում մի լուր կարդացի: Թուրքալի հայկական որբանոցը քանդելու համար շինարարական մեքենաներ են գործի դրվել:

Ասես՝ գլխիս կրակեցին: «Աստված ձեր գլխին փորձանք բերի», բացականչեցի (վերջին շրջանում ինչքան շատ ենք սկսել օգտագործել այս արտահայտությունը...):

Եվ իսկույն մտաբերեցի Հրանտ Դինքի «Ամբաստանում եմ, ով մարդկությունն» վերնագրով հոդվածը:

Դինքն իր հոդվածում ամփոփ ասում էր. «Մի առավոտ մեզ՝ 13 երեխաներիս, վերցրին, Գեղիքիաշայից ուղքով տարան Սիրքեջի, այնտեղից շոգենավով՝ Հայդարփաշա, Հայդարփաշայից էլ գնացքով՝ թուրքալի կայարան, որտեղից էլ, մի ժամ քայլեցնելով, տարան լճի և ծովի եզրին գտնվող մեծ ու ընդարձակ մի հարթ տարածք:

Վաղ առավոտյան արթնանալով և մինչև գիշերվա ուշ ժամերն աշխատելով՝ ավարտեցինք ճամբարի շենքի շինարարությունը:

Գիշերները հոգնությունից տակներս էինք անում:

8 տարեկանում գնացի թուրքալ:

Ուղիղ 20 տարի աշխատանք թափեցի այնտեղ:

Կնոջս՝ Ռաբելի հետ այնտեղ ծանոթացա, այնտեղ մեծացանք, այնտեղ ամուսնացանք: Մեր երեխաները ծնվեցին այնտեղ...



Մի օր մեր ձեռքը տվեցին դատարանից մի թուղթ...

«Դուք՝ փոքրամասնության կառույցները, տարածք գնելու իրավունք չունեք: Ժամանակին, երբ մենք ձեզ թույլատրեցինք, սխալվեցիք: Այս տարածքն այսուհետ պատկանելու է իր նախկին տիրոջը»:

5 տարի տևած մեր պայքարից հետո պարտվեցինք...

Ինչ անենք, որ մեր առջև պետությունն էր կանգնած: Բողոք ունեմ, ով մարդկությունն ...

Մեզ մեր ստեղծած քաղաքակրթությունից դուրս հանեցին:

Տեղավորվեցին այնտեղ մեծացած

ՀԱՄՇԵՆՑԻ ՀԱՅԵՐ

ՄԵՐ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ

Վերջին տասնամյակներում խիստ մեծացել է համշենցի հայերի հանդեպ հետաքրքրությունը: Դրան, անշուշտ, նպաստել են 1971-2006թթ. Երևանում տպագրված «Չայն համշենական» ժողովածուների 5 հատորները, «Լույս Համշենի» (1991-1992) և «Չայն համշենական» (2004-ից առ այսօր) թերթերի հրատարակումն ու անվճար բաժանույնը, նաև 2014-ի գարնանից «Լրատվական ռադիոյով» «Համշենական գրուցարան» հաղորդաշարի շաբաթական 2 անգամ հեռարձակումը, նաև «Արեւմտահայաստանի եւ Արեւմտահայութեան Հարցերու Ուսումնասիրութեան կեդրոնի» կայքէջի համշենահայությանը նվիրված նյութերը: Նաև այդ թեմային նվիրված մի շարք հեռուստահաղորդումներն ու ֆիլմերը: Բայց, որքան էլ զարմանալի է, մեզ շատերն են դիմում համշենցիների (քրիստոնյա, թե իսլամ) մասին տեղեկություններ իմանալու խնդրանքով, ուստի որոշեցինք թերթի այս համարում «Մեր հանրագիտարանը» խորագրի ներքո ներկայացնել «Համշենցի հայեր» հոդվածը:

Ինչպես խորագիրն է վկայում, այն հանրագիտարանային բնույթի է և ներկայացնում է առավել հայտնի, հանրագիտարանային փաստեր՝ զերծ մնալով գիտական բանավեճերից:

Հայաստանի և Սև ծովի հարավային ափերի բնակչության առնչությունները երկար դարերի պատմություն ունեն: Ըստ հույն աշխարհագրագետ Ստրաբոնի (մ.թ.ա. 64/63-մ.թ.22/24)՝ Սև ծովի ափամերձ մի զգալի հատվածը մտնում էր Փոքր Հայքի թագավորության մեջ. «Փառնակիայի (Վիրատուն-Ս.Վ.) ու Տրապիզոնի գավառներից վերև՝ մինչև Փոքր Հայք գտնվում էին Տիբարենացիք և Խաղտիք: Փոքր Հայքը բավական բերրի երկիր է: Ծովաց նման սա էլ ունեցել է միշտ իր բնիկ իշխանները, որոնք մերթ մերթ Հայոց բարեկամներն էին և մերթ ինքնազույլ: Իրենց հնագանդ էին Խաղտիք և Տիբարենները, այնպես որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա»: Հակոբոս Տաշյանը գրում է. «Արդ ճշդիւ այն ծովափը, ուր կը գտնուի հայ Համշեն, կը վերաբերէր Հայաստանի նոյն իսկ երբ ասի պատմութեան մեջ կ'երեւայ առաջին անգամ Armenia ձեւով»:

Նույնիսկ օտար նվաճողներն են Սև ծովի առափնյակն ընկալել որպես Հայաստանի մաս: Երբ Բյուզանդիայի կայսր Կոստանդին Մեծն (306-337թթ.) իր կայսրությունը բաժանեց տարբեր դիոցեզների և նահանգների, կայսրության կազմում գտնվող Առաջին և Երկրորդ Հայքերը, նաև Պողեմոնյան Պոնտոսը միավորեց Հայաստանի դուքս (dux Armeniae) կոչվող պաշտոնյայի իշխանության ներքո:

Պարխարյան լեռնալանջերի հայաբնակ լինելն էր պատճառը, որ հնուց անտի վտանգի դեպքում հաճախ այնտեղ էին պատսպարվում հայ իշխաններն ու շինականները: Ավարայրի ճակատամարտից հետո բազմաթիվ գորավարներ ու մարտիկներ ապաստանեցին այս հայաշխարհի լեռներում և շարունակեցին պարսիկների դեմ պայքարը: Այն, որ հայոց հին օրացույցի ամսօրերից 13-րդը կոչվում էր Պարխար, վկայում է, որ այս լեռնաշղթան հայոց հնագույն ավանդույթով Մասիսի ու Արագածի նման սրբացվել է:

Ավելի ուշ այս բնաշխարհիկ վայրե-



Տեսարան Տրապիզոնից, XX դ. սկիզբ:



Չիլճյանների ընտանիքը, Օրդու, 1890թ.:



Փափազյանների ընտանիքը, Սուխում, 1912թ.:



Կրասնոդար քաղաքի «Արծազանք» թերթի խմբագրակազմը, 1918-1919թթ.:

րում հայերի նորանոր, սովոր խմբեր հաստատվեցին: 8-րդ դարի ակնառու աստվածուհի Դևոնի վկայությամբ՝ արաբների տիրապետության շրջանում 12 հազար հայեր, կանանցով ու երեխաներով, հայր և որդի Շապուհ և Համամ Ամատունիների և այլ նախարարների գլխավորությամբ, հեռանում են իրենց բնակավայրերից և հաստատվում Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող Պարխարյան լեռնաշղթայի ծովահայաց կողմում՝ ներկայիս Թուրքիայի Ռիզեի նահանգի Ռիզե և Փազար (Աթինա) քաղաքների միջև եղած անտառախիտ լեռներում ու ջրառատ հովիտներում:

Ըստ ակադ. Լ.Նաչիկյանի՝ այս գաղթը տեղի է ունեցել 789-790թթ: Ղևնդին լրացնում է պատմիչ Հովհան Մամիկոնյանը՝ գրելով, որ Համամ Ամատունին հաստատվում է Տամբուր քաղաքում, բայց վրաց Վաշդեն իշխանը, օգնական զորք ստանալով, դավադրաբար հարձակվում և ավերում է Տամբուրը: Համամը վերաշինում է քաղաքը և իր անունով կոչում Համամաշեն, որը հետագայում կրճատ արտասանվում է Համշեն: Երկրի դժվարանց, մառախլապատ ու անշավիղ լինելը մեծապես նպաստեց, որ Ամատունիների իշխանությունը Համամաշեն-Համշենում պահպանվի շուրջ 7 դար: Լ.Նաչիկյանը պատմական սակավաթիվ տվյալների հիման վրա պարզել է 15-րդ դարի մի քանի իշխանաց իշխանների անուններ՝ Առաքել, Դավիթ Ա, Վարդ, Վեբե, Դավիթ Բ: Հայտնի են նաև համշենցի մի շարք նշանավոր մտածողների ու գրիչների անուններ՝ 15-րդ դարի ակնավոր գիտնական և մանկավարժ Հովհաննես Բաբունապետ (Հովհաննես Եպիսկոպոս Համշենցի), 15-16-րդ դարերի գրիչներ՝ Աստվածատուր, Կարապետ, Հովհաննես, Խաչատուր, Հակոբ, Մովսես և ուրիշներ, որոնք տքնում էին Խաչեքարի, Քոշտենց, Խուժկա և այլ վանքերում: Համշենի իշխանությանը վերջ տրվեց 1489թ.՝ թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավումից երեք տասնամյակ անց:

Ըստ թուրքական վավերագրերի՝ 16-րդ դարում Համշենը (Հեմշինը)՝ որպես կազա (գավառ) մտնում էր Տրապիզոնի լիվայի մեջ, բաժանված էր 3 նահիյեների (գավառակների, գյուղախմբերի)՝ Հեմշին, Քարա-Հեմշին և Էքսանոս, ուներ 34 գյուղ՝ 671 տուն և 2 բերդ:

18-րդ դարի սկզբներին սկսվում է Համշենի և հարևան Սև գետ գավառի հայերի ողիսականը: Թուրքերի բազմա-հազարանոց ամբոխը մահ տարածելով՝ փորձում է կրոնափոխել նրանց: Հավատի համար պայքարը շատ զոհեր է խլում, և հայերի արնաքամ բեկորները հեռանում են Տրապիզոն, Օրդու, Ունիե, Սամսոն ու Սինոպ, հասնում Նիկոմեդիա: Իսկ Համշեն գավառում մնացողները թեև մահվան սպառնալիքով առերես կրոնափոխվեցին, բայց մինչև 20-րդ դարի կեսերը պահպանեցին հայերենը, և նույնիսկ այսօր էլ իրենց խոսակցական թուրքերենում օգտագործում են բազմաթիվ հայերեն բառեր և տեղանուններ: Կրոնափոխված համշենցիների մի մասը 19-րդ դարում գաղթեց հարավ՝ Էրզրումի, արևմուտք՝ Սաքարյայի և Դյուզբեի նահանգներ, մի մասն էլ տեղափոխվեց արևելք՝ ներկայիս Արդվիհի նահանգի Խոփայի գավառի տարածք: Այստեղ և հարևան Բորչքա գավառում այսօր կան հայախոս համշենահայերի 20-ից ավելի գյուղեր: Կրոնափոխ, բայց հայախոս

համշենահայերի մի քանի գյուղ կար նաև հարևան Աջարիայի կազմում: 1944 թ. Ստալինի հրամանով նրանք աքսորվեցին Ղրղզստան և Ղազախստան: 1960-ական և 80-ական թթ. նրանք դիմեցին Հայաստանում վերաբնակվելու խնդրանքով, բայց, ցավոք, այլևայլ պատճառներով այդ ցանկությունը չիրագործվեց: 1980-ական թվականներից նրանցից շատերը սկսեցին տեղափոխվել ՌԴ Կրասնոդարի երկրամաս, Ռոստովի և Վորոնեժի մարզեր, 1990-ականներից՝ նաև Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի գավառ:

Մեր հաշվարկներով, այսօր Թուրքիայում և աշխարհի տարբեր երկրներում բնակվում են Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով հաղորդակցվել կարողացող մոտ 45-50 հազար համշենցիներ, որոնցից շատերը, ցավոք, տարբեր հանգամանքների բերումով, ստիպված հիմնականում օտարախոս են:

1947թ. Համշենի բարբառին նվիրված աշխատություն է հրատարակել Հ. Աճառյանը, ըստ որի այն ձևաբանական դասակարգմամբ պատկանում է «Կը» ճյուղին, իսկ կրոնափոխված համշենահայերի խոսվածքն ուսումնասիրել ենք մենք և պարզել, որ պատմական ձևապատկերներ են առաջացել քրիստոնյա և իսլամ համշենցիների խոսվածքներում:

Կրոնափոխությունից խուսափելու համար Տրապիզոնի նահանգում սփռված համշենցի հայերը նոր բնակավայրերում էլ հանգիստ չգտան. նրանց հանդեպ շարունակվում էին հալածանքները, ինչի պատճառով շատերը ստիպված էին արտագաղթել Սև ծովի ռուսական ափեր: Հայագրի նշանավոր փոխծովակալ (1854-ից՝ ծովակալ) Լազր Սերեբրյակովը 1849թ. Ներսես Աշտարակեցուն գրում է. «Իմ կողմից Նովոռոսիյսկ քաղաքը հիմնադրելուց հետո թուրքահայատակ լուսավորչական հայեր Տրապիզոնից, Սինոպից և սահմանամերձ այլ վայրերից բնակության են եկել այնտեղ»:

Հայերի հոսքը դեպի Սև ծովի հյուսիսային ափեր ու Աբխազիա մեծ չափերի է հասնում 1894-95թթ. ջարդերի և 1915-1923թթ. ցեղասպանության տարիներին: Մեծ եղեռնից առաջ՝ 1909-1914թթ. Տրապիզոնում, Սամսոնում և Կիրասոնում լույս էին տեսնում մի շարք հայերեն պարբերականներ, Տրապիզոնում՝ «Գեղջուկ», «Խարիսխ», «Մոծակ», «Շամանդաղ», «Շարժում», «Պիծակ», «Պոնտոս», «Բժիշկ», Կիրասոնում՝ «Փեթակ», «Ռեքլան», «Կայծ», Սամսոնում՝ «Դպրոց»: Ողջ նահանգում, ամենահամեստ հաշվումներով, կար առնվազն 155 դպրոց, 145 վանք ու եկեղեցի:

Կրասնոդարի երկրամասում և Աբխազիայում համշենցի հայերը, այլ վայրերից գաղթած հայերի հետ, փորձում են բուժել վերաբերը, հայ ժողովրդի վերածնունդի գաղափարին հավատարիմ՝ եկեղեցիներ ու դպրոցներ են կառուցում, զարկ են տալիս մշակույթին՝ դարավոր փորձով համոզված, որ հայոց հարատևությունը գեների ու գրչի դաշինքի մեջ է:

20-րդ դարի առաջին տասնամյակներում Աբխազիայում հրատարակվում են մի քանի հայերեն թերթեր՝ «Նույս» (1912-13), «Նոր կյանք» (1918), «Փարոս» (1919), «Կարմիր աստղ» (1920-23): Հետագա տասնամյակներում Աբխազիայում գործում էին հայկական պետական թատրոն, մանկավարժական ուսումնարան, հայ գրողների միավորում, երգի, պարի, թատերական խմբեր և այլն:

Ցավոք, հատկապես 1992-93 թթ. վրաց-աբխազական պատերազմի տարիներին սկիզբ առած արտագաղթի պատճառով հայերի թիվը կիսով չափ կրճատվեց և 2011 թ. տվյալներով կազմում է 41.864 հոգի: Աբխազիայի հայերի



Ղուկայան եղբայրներ, XX դ. սկիզբ:



Սանդուխտ Կիրակոսյան, XX դ. սկիզբ:



Կուրանոարմյանսկայա գյուղի հայկական դպրոցը, 1946-47թթ.:

կրթական, մշակութային կյանքն անկում ապրեց, 1941թ. գործած 128 հայկական դպրոցների (12040 աշակերտ) փոխարեն 2012 թ. մնացել էին ընդամենը 31 դպրոցներ, որոնք բոլորն իրար հետ ունեին 2008 աշակերտ:

Վիճակը միփթարական չէ նաև ՌԴ Կրասնոդարի երկրամասում: Դեռևս 1904թ. Անապայում լույս էին տեսնում «Օրգան», իսկ 1905թ.՝ «Ի գեն» թերթերը, իսկ այնուհետև Արմավիրում՝ «Կարիք» (1917-18), «Նոր ուղի» (1919-20), «Բանվորի ձայն» (1920), «Բանվորի կարիք» (1920), իսկ Կրասնոդարում՝ «Արձագանք» (1918-20), «Կարմիր աստղ» (1920-21), Տուրապետում՝ «Գրոհ» (1932) պարբերականները: Նույնիսկ դժվարին 1930-ական թթ. Սոչիի «Սոչինսկայա Պրավդա» թերթը տպագրում էր նաև հայերեն նյութեր, ապա այսօր Կրասնոդարի երկրամասի 281.680 և Աղդեթական Հանրապետության 15.561 հայերը (2010թ. մարդահամարի տվյալներով) գրկված են մայրենի լեզվով մանուկից:

1925 թ. Կրասնոդարի երկրամասի Մայկոպի և Կուրանի օկրուգների հայկական շուրջ 70 բնակավայրերից կազմվեց ազգային վարչական մեկ միավոր՝ Հայկական ազգային շրջան (տարածքը՝ 1286 քառ. կմ), Շահումյան (նախկին՝ գ. Ելիզավետպոլսկոյե) կենտրոնով: Ըստ 1926թ. համամիութենական մարդահամարի տվյալների՝ շրջանն ուներ 8148 բնակիչ: Հայկական շրջանին տրվեց ազգային և տեղական հարցերն ու պահանջները ինքնավարություն, հրատարակվում էին «Երիտասարդ բոլշևիկ» (1932-35), «Բերքի համար» (1933-40), «Коммунар» (1940-42, 1944-53) հայերեն և երկլեզվյան թերթերը, կային հայկական դպրոցներ, ակումբներ ու գրադարաններ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին շրջանը քանիցս ձեռքից ձեռք անցավ, ավերվեց, կրեց ծանր կորուստներ: Նրա տարածքում գործում

էր տեղի բնակիչներից կազմված Ստեփան Շահումյանի անվան պարտիզանական ջոկատը: Հայկական շրջանը, որպես առանձին ազգային վարչական միավոր, լուծարվեց 1953թ.:

Մեծ Հայրենականի տարիներին Կրասնոդարի երկրամասի հայերից ինը, իսկ Աբխազիայից՝ չորսը, արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման:

Պատերազմից հետո երկրամասի հայերը վերականգնեցին ավերված գյուղերը, բայց այդպես էլ չկարողացան վերաբացել դպրոցներից շատերը, իսկ եղածների մեծ մասն էլ փակվեց բրեժնևյան ձախճացման տարիներին, և, այսօր, 1951թ. եղած 140 հայկական դպրոցների փոխարեն, փոքրաթիվ աշակերտներով, գործում են մի երկու տասնյակ հայկական կիրակնօրյա դպրոցներ, որոշ դպրոցներում էլ կան հայերենի ուսուցման դասարաններ կամ խմբեր: Փակվել են նաև Կրասնոդար քաղաքի հայկական թատրոնը, տպարանը, ժողովրդական համալսարանը, վաղուց լռել են երկրամասի տարբեր քաղաքների հայկական ռադիոհաղորդումները:

Ուրախալի է, որ վերջին երկու տասնամյակում որոշ չափով աշխուժացել է համայնքային կյանքը, գրանցվել են մի շարք հայկական հասարակական կազմակերպություններ, Ռուսաստանի հայերի միության բաժանմունքներ, կառուցվել են հայկական եկեղեցիներ, հրատարակվում են ռուսերեն թերթեր, տարբեր քաղաքներում ու գյուղերում գործում են հայկական ինքնագործ երգչախմբեր ու պարախմբեր:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ
«ՀՀ ԳԱՍ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀՎ փոխնախագահ, «Ձայն համշենական» թերթի ղեկ. խմբագիր

ՄԵԿ ՄԻԼԻՈՆԸ ԶԳԻՏԵՄ, ԵՄ ՄԵԿ ՀԱՅ ՈՒՆԵՒ...

Թուրք գրողի հոդվածը հայ տատիկի մասին

Թուրքական «Sozcu» լրատվական կայքը հրատարակել է թուրքական մի շարք առաջատար լրատվամիջոցներում հրատարակվածներով հանդես եկած թուրք հայտնի լրագրող, գրող Բեքիր Ջոշքունի «Իմ հայը» վերնագրով հոդվածը:

Հոդվածում հեղինակը պատմում է իր խորթ տատիկի մասին, որի հայ լինելու մասին իմացել է մեծանալուց հետո միայն: Հոդվածի հայերեն տարբերակը՝ Emehhaber.am-ի թարգմանությամբ, ներկայացնում ենք ստորև.

«Ես տեղեկություն չունեմ այն մասին, թե ինչ եղան մեկ միլիոն հայերը... Ես ընդամենը մեկ հայ ունեի...»

Մորս մահից հետո հայրս, ով պետական ծառայող էր, ինձ ու քրոջս տարավ մորական տատիս մոտ: Տատիկ մեզ դիմավորեց Ուրֆայից ոչ հեռու Թուլմենի այգիների մեջ գտնվող մեծ տանը: Մանկությունս շատ հիշողություններ ջնջվել են արդեն, սակայն մեր հանդեպ ունեցած նրա գործվածից վերաբերմունքը լավ եմ հիշում: Տատս նման չէր այդ մեծ տանն ապրող մորաքույրերիս ու մնացած կանանց. բարձրահասակ էր, նրբակազմ, շիկահեր ու կապուտաչյա: Անունը Ումմուհան էր: Ողջ ընտանիքն առանձնահատուկ հարգանք ու սեր էր տածում նրա նկատմամբ: Միշտ խորհուրդ էին հարցնում նրանից, հաշվի առնում նրա կարծիքը: Հատկապես աչքի էր զարնում խստաբարո հորս՝ նրա նկատմամբ ունեցած հարգանքն ու վստահությունը: Մենք հասակ առանք: Մեծացանք ու հետո իմացանք, որ նա մեր իսկական տատիկը չէր, որ նա եկել էր մեր հարազատ տատիկի մահվանից հետո:

Նա մի հայ աղջիկ էր... Պապս նրան վերցրել էր Եփրատի ավազանից Սիրիա ուղարկվող (բռնի գաղթեցվող) և տարբեր տեղերում ոչնչացվող հայերի քարավանի միջից ու ամուսնացել հետո: Պապս, մորաքույրերս, հարսները, կարճ ասած՝ բոլորը սիրել էին նրան: Նա տան մեծն էր համարվում:

Տեսնում էի, թե ինչպես էին ժամանակ առ ժամանակ խոնավանում այդ գեղեցիկ ու միշտ ուղիղ կեցվածք ունեցող կնոջ աչքերը, երբ սիրում էր ինձ ու փոքրիկ քրոջս, նրա դեմքին նշմարում էի այն վիրավորանքը, որը երբեք էլ չէր կարողանում մինչև վերջ թաքցնել...

Ահա իմ հայկական հարցը: Զգիտեմ, թե հայերին ինչ են արել, թե արդեն ինչ իմաստ ունի այս վեճը, թե որտեղ է գտնվում ճշմարտությունը: Բայց կուզեի իմանալ, թե ով է տատիկիս պոկել իր հայրենիքից ու իր տնից այն ժամանակ, երբ նա դեռատի օրիորդ էր...

Կուզեի հաշիվ պահանջել այն տառապանքի համար, որը նա ստիպված է եղել թաքցնել, այն կարոտի համար, որը նա չէր ցանկանում ցույց տալ, այն արցունքների համար, որոնք նա գուցե ամեն գիշեր թափում էր մեզանից թաքուն: Կուզեի իմանալ, թե ովքեր են նրան դատապարտել այդ անվերջ աքսորին...

Մեկ միլիոնը չգիտեմ, ես մեկ հայ ունեի... Իմ շատ սիրած այն թախծալի կինը...»:

Այս էր իմ պատմությունը... Չեք կարող պատկերացնել, թե հրատարակելուց հետո որքան հայիոյանքների են արժանացել, որոնք հնչում էին այսպես՝ «Հայից ցեղ», «Հայի վիժվածք»: Բայց ինչպե՞ս կարող ես 1915-ը պատմել աշխարհին մի գլխով, որը չի կարողանում հասկանալ թերթում հրատարակված հոդվածն ու դրա մեջ եղած մարդկային զգացմունքները: Եղբայր, այնքան շատ է տգիտությունը, որ...»:

ՀԱՄՇԵՆՑԻ ԲԻՆԱԿ ԲԵՌԻՆ

Սկիզբը՝ 1-ին էջում

Դրանից հետո Բիլալ քեռու ընտանիքի համար դժվար օրեր սկսվեցին: Երբ որ հարևանների կողմից յուրաքանչյուր պահի ընտանիքից մեկին սպանելու վտանգի հետ ապրելու վախն անհավոր դարձավ, Բիլալ քեռին օգնություն խնդրեց իր մտերիմ ընկերոջից՝ հորիցս:

Հայրս, իր ընկերոջ այդ վիճակին տեղեկանալով, առանց ժամանակ կորցնելու ճանապարհ ընկավ, մյուս օրը նրան և ընտանիքին իրերով, նույնիսկ անասուններով մեր գյուղ բերեց: Նամանավանդ որ Բիլալ քեռու գյուղը մեր գյուղից շատ հեռու էր:

Ներկայումս նրանց բնակվելու տունն իմ պապիկի տունն է և հայրս, առանց մեկ րոպե մտածելու, այն Բիլալ քեռուն տվեց: Որոշ ժամանակ անց Բիլալ քեռին, իր գյուղում տուն ու դաշտերը վաճառելով, այդ տունը պապիկիցս գնեց: Մնացած փողով մի քիչ եզրակացրեցին, մի քիչ ընկույզի այգի գնելով արդեն մեր գյուղացիներից մեկը դարձավ: Այդ օրվանից հետո մենք կարծես մեկ ընտանիք դարձանք նրանց հետ:

Մեր գյուղում օրերը օրերի, ամիսներն ամիսների, եղանակները եղանակների հետևից գնում էին: Սինանն ու ես սկսեցինք դպրոց հաճախել: Մեր գյուղի առաջին աստիճանի դպրոցում առաջին երեք դասարանները մեկ դասարանում, վերջին երկու դասարանն էլ մեկ այլ դասարանում էին դասերն անցկացնում: Չեմ կարող ասել մատուցվող կրթությունը լավ էր թե՛ վատ, բայց երբ երեք տարբեր դասարան միաժամանակ դաս են սովորում, շատ զվարճալի տեսարան էր դառնում: Իրականում ես միաժամանակ լսում էի և՛ առաջին, և՛ երկրորդ, և՛ երրորդ դասարանի դասերը և երեքն էլ միաժամանակ էի սովորում: Իմ ուսուցիչները որոշ ժամանակ անց հասկացան դա և շատ զարմացան: Որովհետև ես երկրորդ դասարանցիների դասերը երկրորդ դասարանցիներից, իսկ երրորդ դասարանցիների դասերը նրանցից ավելի լավ էի սովորում: Այսինքն, բոլոր անբարենպաստ պայմաններին հակառակ՝ շատ հաջողակ աշակերտ էի: Սակայն իմ ընկեր Սինանի մասին նման բան ասելը անհնար էր: Դրա վառ ապացույցն էին այն գնահատականները, որոնք տարվա վերջում մեր օրագրերում էին նշանակում: Երբ իմ բոլոր գնահատականները գերազանց էին, Սինանը հագիվ կարողացավ փոխադրվել մյուս դասարան: Դրանում միզուցե դեր խաղաց մեր ուսուցիչների՝ ոչ ոքի նույն դասարանում չթողնելու ցանկությունը:

Հետո սկսվեց մեր ամառային արձակուրդը: Սակայն դա դժվար էր արձակուրդ անվանելը: Չեմ կարող ասել, որ երկար և հոգնեցուցիչ կրթական շրջանից հետո մեր մանկությունը թևակոխեց ազատությունը վայելելու շրջան: Արդեն դպրոց չէինք գնում, սակայն գյուղի մզկիթում բացված Դուրանի դասընթացներին էինք հաճախում: Ուսուցիչն էլ մեր գյուղի իմանն էր: Դասընթացներից ազատ ժամանակ էլ մեր մեծերի հետ միասին գյուղի դաշտերում և այգիներում էինք աշխատում: Դա գյուղի կյանքի անհրաժեշտ տարրեր են: Կյանքի պայմանները ստիպում են որպեսզի օգտագործվի նույնիսկ երեխաների ուժը: Սակայն ամեն ինչին հակառակ՝ մենք երեխաներ էինք և նույնիսկ այդ ծանր պայմաններում ժամանակ էինք գտնում փայտեղ գետի ափը և այնտեղ լողանալու, նույնիսկ ձուկ բռնելու առիթ տեսնելու:

Մի օր, երբ գյուղի իմանը հիվանդ էր և դաս չկար, բոլորս միասին վազեցինք գետի կողմ: Գետում, որի ամենախորը տեղը մեր կրծքից էր, փորձում էինք լողալ և խաղեր խաղալ:

Զվարճանալու պահին, երբ մեր ծիծաղը և ճիչերը տարածվում էին գետով մեկ, մի պահ նկատեցի որ իմ մտերիմ ընկեր համշենցի Սինանը կողքիս է: Բայց գետ գալիս միասին էինք: Հարցրեցի ընկերներին՝ ոչ ոք չգիտեր, թե ուր է գնացել: Միանգամից երեխայական ուղեղումս բացասական մտքեր սկսեցին պատվել: Այդ պահին հիշեցի, որ նրա ընտանիքը այրուհակցական վրեժի մեջ է, մտածեցի, որ թշնամիները նրան փախցրել ու վնաս են պատճառել: Կամ եթե նրան բռնեն ու մի վատ բան անեն...:

Վախեցած ցատկեցի ջրից, ուր քիչ առաջ երջանիկ ծայրեր արձակելով խաղում էի և վազեցի գյուղի ուղղությամբ: Ընչակտուր վազելով քարերով և թփուտներով պատած արահետով, որը ձգվում էր հսկա բարդիների միջև, զգացի, որ սիրտս կարծես կրծքիցս դուրս է թռչում: Ճանապարհին հիշեցի, որ գետի մոտ է գտնվում Բիլալ քեռու ընկույզի այգին. կարող է Սինանն այնտեղ է գնացել: Իհարկե, այնտեղ պետք է գնացած լինի: Եթե տուն գնալու լինեք, մզկիթից դուրս գալու պես տուն կողողալով: Որովհետև նրանց տունը մզկիթի ուղիղ դեմ դիմաց է: Մինչդեռ նա, մզկիթից դուրս գալով, տուն գնալու փոխարեն մեզ հետ միասին գետ եկավ:

Ամմիջապես որոշում ընդունելով՝ շրջվեցի և այս անգամ վազեցի Բիլալ քեռու ընկույզի այգու ուղղությամբ: Այնտեղ հասնելու համար պետք է գետակի մյուս կողմը անցնեի: Բախտիցս գետակը սաղը և որոշ հատվածներում նեղ էր: Քարոտ հատակով գետակն անցնելիս թաց քարի վրա կանգնեցի և անսպասելիորեն ոտքս ցավեցրեցի: Ցավից ինձ գետնին գցեցի ու սկսեցի գալարվել: Ահավոր ցավ էի զգում: Սակայն կորցնելու ժամանակ էլ չունեի, քանի որ խոքը գնում էր մտերիմ ընկերոջ կյանքի մասին: Մեծ ջանք գործադրելով ոտքի կանգնեցի և ստիպեցի ինձ շարունակել ճանապարհս:

Արդեն չէի վազում, ոտքս քաշ տալով առաջ էի գնում: Ոտքիս թաթը ուռել և կապտել էր, ցավն էլ չէիմանալու աստիճանի էր հասել: Սակայն երկար ճանապարհ չէր մնացել: Հավաքելով ուժերս, համառորեն շարունակում էի ճանապարհս: Ավելի շուտ հասնելու համար նախընտրեցի շեղվելով ճանապարհից անցնել ընկույզի այգիների միջով, մտածելով, թե դա զգալիորեն կկրճատի ճանապարհս: Քիչ անց Բիլալ քեռու ընկույզի այգում էի:

Կանգնելով ականջ դրեցի: Թռչունների ձայների միջև ջանում էի մարդու ձայն լսել: Տասնյակ տարբեր թռչունների ձայներից բաղկացած հսկայական նվազախումբը այնպիսի անուշ մեղեդիներ էր նվազում, որ մինչ օրս կարոտում եմ դրանք: Հատկապես կարոտում ես դա՛ ապրելով քաղաքում, մարդկանց և ավտոմեքենաների աղմուկի մթնոլորտում:

Միայն մեկ բանի մասին էի մտածում գտնել մտերիմ ընկերոջս՝ Սինանին կամ առնվազն նրա հորը: Զանքիս փոխհատուցումը չուշացավ՝ ականջս սրելով առջևից ինչ որ կրքոտ վիճաբանության ձայներ լսեցի: Երջվելով ձայնի ուղղությամբ՝ ջանում էի տեսնել խոսակիցներին: Սակայն ընկույզի ծառերի խիտ լայն

թափերը խանգարում էին, որպեսզի տեսնեմ նրանց:

Աշխատելով չկանգնել կաղ ոտքիս վրա՝ մի քիչ առաջ գնացի: Նրանց մոտենալով՝ սկսեցի ավելի պարզ լսել ձայները. երկու տղամարդ բավականին բարձր տոնով վիճում էին: Նրանցից մեկը Բիլալ քեռու ձայն էր: Ուշադիր լսելով, քիչ անց հասկացա, թե ում է պատկանում մյուսը՝ համշենցի Բիլալ քեռու դաշտի հարևան դարբին Ռայիֆի ձայնն էր:

Այն աստիճան բարձր ձայնով գոռում գոչում էին, որ անհնարին էր հասկանալ թե ինչն է վեճի պատճառը: Նամանավանդ այնպիսի տապալուրություն էր, որ յուրաքանչյուր պահի կանգնեմ աստակների և հարվածների փոխանակմանը: Շատ վախեցա: Ծառի հետևում թաքնվելով՝ սկսեցի հետևել նրանց: Եվ հենց այդ պահին Ռայիֆի խոսքերը լսեցի, որոնք միզուցե կյանքիս շրջադարձային պահ դարձան:

«Եթե դու մարդ լինեիր, ապա քո իրական ինքնությամբ հանդես կգայիր՝ քո հայ լինելը չէիր թաքցնի, քեզ համշենցի չէիր ներկայացնի: Թե՛ կարծում ես, մահմեդական դառնալով հայությունից ազատվել ե՞ս: Կրոնափոխը ի՞նչ պետք է լինի որ...»

Ամբողջ մարմնովս դողում էի: Դարբին Ռայիֆ քեռին Բիլալ քեռուն մեղադրում էր, որ նա «հայ է»: Իհարկե, չեմ կարող ասել, որ այդ տարիքում չգիտեի, թե հայերը ովքեր են, սակայն լսածս տեղեկությունների համաձայն, հայ լինելը լավ բան չէր: Նրանք՝ այսինքն հայերը, պետք է որ շատ վատ մարդիկ լինեին, ռադիկալ լսել էի, որ անխիղճ սպանում են մեր երկրի հյուպատոսներին:

Սակայն Բիլալ քեռին լավ մարդ է: Նա ոչ թե հյուպատոս, այլ անգամ հավ չի կարող մորթել: Հատկապես մեր գյուղում կամ մոտակայքում հյուպատոս չկա... Հետո, այսպես միանգամից որոտեցի առաջ բերեց նրա հայ լինելը: Իմ հասկանալով, դարբին Ռայիֆ քեռին չափն անցել է և ստորացնելու համար նրան մեղադրում է հայ լինելու մեջ:

Ստածում էի, որ անշուշտ, Բիլալ քեռու պես ճշմարտախոս մեկն այդ գրպարտանքը չի ների, և դարբին Ռայիֆին նման խոսքերի համար արժանին կհատուցի: Իրականում անհարգի մարդն արժանի էր դրան: Անհանգստացած սպասում էի սիրելի Բիլալ քեռու պատասխանից հետո դարբին Ռայիֆի դեմքի արտահայտությանը: Սակայն Բիլալ քեռու պատասխանը սպասածիս պես չեղավ: Դարբին Ռայիֆի փոխարեն ես շուկ ապրեցի:

«Այո, հայ եմ, հետո ի՞նչ: Հայ լինելուս համար նշանակում է, որ անպայման իրավունք էլ չպիտի ունենամ: Իմ դաշտի սահմանը խախտել ես: Ես քեզանից ուզում եմ, որ վերականգնես նախկին սահմանը: Եթե չվերականգնես, կբողբեմ գյուղի տարեցների խորհրդին: Թե՛ նրանք էլ ես ասելու... «Բիլալը հայ է, սակայն իրեն համշենցի է անվանում, դրա համար էլ դաշտը զավթել եմ...»:

Կարծես վրաս եռման ջուր լցնեին: Ականջներիս չէի հավատում, նշանակում է հայրիկիս չափ սիրելի Բիլալ քեռին, ինչպես նաև սիրելի ընկերներս՝ Սինանն ու Էրսինը, հայ են: Ամբողջովին ուժասպառ էի: Իրականում սպասում էի, որ Բիլալ քեռին հակադարձի այդ մեղադրանքին, պատասխանելով «Ո՛չ, ես հայ չեմ, իրական հայը դու՛ ես, հայերը քեզ նման ուրիշի ունեցվածքն են հափշտակում,

սահմաններն են խախտում», կամ դրա նման պատասխան տար: Սակայն առանց հակաձայնելու մեղադրանքի ընդունումը պատճառ դարձավ, որ իմ փոքր ուղեղում փոթորիկ բարձրանա:

Այդպիսի խառնաշփոթ մտքերի մեջ մտածեցի որո՞ս մասին: Խեղճ մարդը եթե իմանա, որ իր ամենամտերիմ ընկերը հայ է, ո՞վ գիտի, թե ինչպես կոխարին: Եվ նրանց մեր գյուղ բերողն ու բնակեցնողն ան չէ՞ր: Ամենալավը կլինի այդ իրականությունը որոշ ժամանակ հայրիկիցս թաքցնեմ:

Անսպասելիորեն հիշեցի այստեղ գալուս պատճառը՝ սիրելի ընկերոջս՝ Սինանի, անհետանալը: Ներսումս ամեն ինչ անմիջապես խառնվեց: Եթե նույնիսկ հայ է, նա իմ ամենալավ ընկերն է: Այժմ ամենակարևորը նրան ողջ-առողջ գտնելն է: Համոզվելուց հետո, որ նա լավ է, անհրաժեշտության դեպքում կվերանայեմ մեր ընկերությունը: Սակայն այժմ չեմ ուզում նույնիսկ մտածել, թե նրա հետ ինչ որ վատ բան է պատահել:

Երբ ես տառապում էի խառնաշփոթ մտքերով, դարբին Ռայիֆն անսպասելի մի շարժումով շուռ գալով սկսեց հեռանալ այնտեղից, չվարանելով մրթմրթալ. «Անիծված լինես դու էլ, սահմանն էլ: Հայի՛ մեկը»:

Համշենցի Բիլալ քեռին չպատասխանեց այդ խոսքերին: Սակայն իմ թաքնված տեղից կարողացա տեսնել, թե ինչպես բռունցքները սեղմեց:

Ինձ հավաքելով, թաքնվածս տեղից վեր կացա և գնացի նրա ուղղությամբ: Բիլալ քեռին դեռևս ինձ չէր տեսել, դեռ սեղմած բռունցքները չէր բացել, նայում էր հեռացող Ռայիֆ քեռուն, որը հեռանում էր ընկույզի այգիների միջով տանող արահետով: Երևի լսեց ոտքերիս տակի չոր խոտի ձայնը, որովհետև իսկույն շրջվեց: Երբ որ նայեցի աչքերին, վախից մազերս շարժվեցին: Մինչ այդ երբեք նրան այդպես չէի տեսել, իմ առջև կարծես կանգնած էր ոչ թե Բիլալ քեռին, այլ ինչ-որ ուրիշ մեկը: Կիտած ունքերով և նյարդայնացումից այլայլված երեսով նման էր իմ սարսափ երազներում տեսած վատ մարդկանցից մեկին:

Վախից լեզուս կծեցի: Աչք աչքի եկանք: Ահա այդ պահին կարծես մի հրաշք տեղի ունեցավ. տարեց մարդու լարված երեսը, կիտած ունքերը փոխվեցին մշտական ժպտերեսությամբ: Կարճ ընդմիջումից հետո հարցրեց.

- Տղան, բարով եկար: Ինչպե՞ս ես:
Աննկարագրելի հանգստացա: Սակայն չեմ կարող ասել, որ ամբողջովին կարողացա հավաքել ինձ: Կտրտվող ձայնով հարցրեցի.

- Սինան... Սինանն այստեղ եկե՞լ է:

Իմ շփոթությանը կարևորություն չտալով՝ տարեց մարդը սիրով շոյեց գլուխս:

- Այո, քիչ առաջ եկավ: Ես էլ նրան մի բան բերելու համար տուն ուղարկեցի: Ընկույզի ծառերի արմատները մշակեմ... Եթե ուզում ես նստիր, սպասիր: Մի քիչ հետո կգա:

Չեմ կարող պատմել, թե ինչպես հավանեցի խոսքերը: Նշանակում է իզուր տեղն էի անհանգստանում: Նստեցի խոտերի վրա, իսկ Բիլալ քեռին անմիջապես դիմացս՝ մի ծառի կոճղի վրա և ասաց. «Տղան, քեզ շնորհավորում եմ, բոլոր գնահատականներդ գերազանց են: Դպրոցի լավագույն աշակերտը դու ես... Սրճարանում ուսուցիչը քո մասին ասաց, որ դեռ առաջին դասարան ես, բայց կա-

րողանում են մրցել հինգերորդ դասարանցիների հետ: Եթե այդպես է, դու պարտավոր ես կրթված մարդ դառնալ, պետք է մեր գյուղի և հայրենիքի համար օգտակար գործեր անես: Քո հոր հետ եմ խոսել, նա էլ ինձ պես է մտածում: Վճռական է ամեն գնով քեզ կրթություն տալ...»:

Բիլլալ քեռուն միշտ շատ եմ սիրել: Նա գյուղի մյուս տարեց մարդկանց նման, փոքր երեխաների հետ միշտ շատ լավ երկխոսություն էր կարողանում հաստատել: Ներկա խոսքերը ինձ նման փոքր երեխայի համար միգրացիոն անհաշատ լսել ցանկանալու խոսքեր էին: Անսպասելիորեն լռեց, բաձկոնի գրպանից երրորդ սիգարետը և նրա անբաժան մաս կրակայրիչը հանեց: Չայնով կրակայրիչը բացելով՝ սիգարետը վառեց: Այդ պահին նրան նայելու հնարավորություն ունեցա: Որովհետև մեր գյուղում, մեծերի հետ խոսելիս, նրանց աչքերին նայելն անհարգալից էր համարվում: Երբ նրանք խոսում էին մեզ հետ, մենք մեր աչքերը իջեցնելով գետնին էինք նայում և ուշադիր լսում նրանց: Մի քանի րոպե Բիլլալ քեռու գեղեցիկ երեսին ասպարդյուն փնտրում էի հայության հետքերը, որի մասին, իրականում, շատ տեղեկություն չունեի: Սակայն, ամբողջ անհանգստությանս հակառակ, որևէ նոր բան չկարողացա հայտնաբերել: Ծխելով, աչքերը բարձրացնելով՝ ինձ նայեց: Ահա այդ պահին իմ ուսումնասիրությունն ավարտվեց: Գլուխս կախ շարունակեցի լսել նրան:

- Եթե քեզ նման մեր ավանակ տղաներն էլ սիրեին կարդալ: Ամբողջ հետաքրքրությունը գետ գնալ, ջրով խաղալ, ծուկ բռնել, կարճ ասած, պորտաբուժությանը զբաղվելն է:

Բիլլալ քեռու թվարկած բացասական երևույթներն իրականում իմ կողմից նույնպես սիրված էին: Մտածեցի, որ ես էլ իսկական պորտաբույս եմ:

Այդ պահին մեզ մոտեցող ծայր լսեցի: Երջվելով դեպի ծայրի կողմը՝ տեսանք Սինանին: Ուսին իսկապական բահ մեզ մոտեցավ: Ողջ առողջ էր: Այդ պահին երջանկություն զգացի: Երբեք չէի մտածի, որ նրան տեսնելիս այդպես կուրախանամ:

Բիլլալ քեռին, Սինանի ձեռքից բահը վերցնելով, ասաց. «Դե, ձեզ թույլատրություն եմ տալիս: Գնացեք գետում խաղացեք, բայց նայեք, շատ չտարվեք, ոչ ոքի չանհանգստացնեք»:

Ուրախությամբ ոտքի կանգնեցի: Սակայն ոտքիս թաթի մասին մոռացել էի: Չմտածելով սեղմեցի ու ցավից գոռալով, ընկա գետնին: Երկու ձեռքով ոտքիս թաթը բռնելով՝ սկսեցի գալարվել: Բիլլալ քեռին անհանգստացած շրջվեց իմ կողմ:

- Տղաս, ի՞նչ է պատահել: Ի՞նչ եղավ քեզ:

- Երկու ոտքս եմ ջարդել... - միայն կարողացա ասել ես:

Քիչ անց Բիլլալ քեռին ինձ գրկած ուղևորվեց դեպի գյուղի սնխչի Շահիդ քեռու տուն: Չնայած իր տարիքին՝ Բիլլալն ինձ արագ հասցրեց Շահիդի տուն: Այդ պահին ժամը 12-ի արդթքն էին կարդում:

Ղան մոտ մեզ դիմավորեց Շահիդի թոռը՝ Վեդաթը: Բիլլալ քեռին ինձ տարավ մինչև բազմոցը: Շահիդն այդ պահին նամակ էր անում: Սպասեցինք մինչև որ ավարտի աղոթքը: Նամակն ավարտելուց հետո տարեց սնխչին թռռանը կարգադրեց հավաքել աղոթքի փոքրիկ գորգը և դիմեց Բիլլալ քեռուն:

- Բարով ես եկել, Բիլլալ: Այսօր ինչպե՞ս ես:

- Ընդհանրապես Շահիդ եղբայր, լավ եմ, - պատասխանեց Բիլլալ քեռին և

ինձ ցույց տալով ասաց, - ես լավ եմ, բայց այս երեխան երևի լավ չէ:

Չայնը շատ մտահոգ էր: Շահիդը կապտած թաթս երկու ձեռքով բռնելով, մատներով ուշադիր գննեց: Շատ էր ցավում, բայց ամոթից չէի կարող գոռալ և աշխատում էի, որ երես չայլայլվի:

Շահիդը, գնումն ավարտելով, կտրով ամուր կապեց ոտքիս թաթը: Բիլլալ



քեռու անհագստությունը դեռ չէր անցել:

- Շահիդ եղբայր, երեխայի ոտքը ինչպե՞ս է: Վտանգավոր բան չկա, չէ՞, - ժամանակ առ ժամանակ հարցեր էր տալիս: - Դու երեխայից ավելի վատ ես, Բիլլալ: Լուրջ բան չկա: Ոչ կտրվել է, ոչ էլ դուրս է ընկել: Մի քանի օր թող վրան չկանգնի, որևէ հետևանք չի մնա: Երեխայի գործն ավարտված է, բայց քեզ ես չեմ կարող բուժել: Իմամի մոտ գնա, թող նա աղոթի, - ժպտած Շահիդ քեռին:

Քիչ անց ճամփա ընկանք դեպի տուն: Բնականաբար, ես դարձյալ Բիլլալ քեռու գրկում էի:

Երեկոյան տանը շատ նեղված էի: Որովհետև վախենում էի, որ հայրս կիմանա իմ մեծ գաղտնիքը: Փառք Աստծո, որ մեր գյուղում ծնողներն առանձին, երեխաներն էլ առանձին սեղանի շուրջ էին ուտում և մեր տանը նույն օրերն էր գործում և հայրիկիս հետ սեղանի շուրջ հանդիպելու վտանգ չկար: Ընթրիքից հետո կարդալու պատրվակով իմ սենյակ գնացի և, կարճ ժամանակ անց, քնեցի:

Մյուս օրը Ղուրանի դասից առաջ չէի ուզում հանդիպել Սինանին և Երսիսին: Այդ պատճառով քայլեցի դեպի գյուղի վերին հատվածը: Հետո, դասընթացին գնալով, նրանց այնտեղ հանդիպեցի: Շատ կարգապահ և նույնիսկ խիստ իմամ ունեինք և թույլ չէր տալիս խոսել: Այդ կրոնականը երկար ընկույզի փայտով հարվածում էր խոսողներին և ծիծաղելով հարցնում. «Հը՞, հավանեցի՞ր ընկույզը»:

Բազմաթիվ անգամ իմ ու Սինանի հայացքները հանդիպեցին, բայց իմամի ձեռքի ընկույզի փայտի զոհ չդառնալու համար, ընդհանրապես չխոսեցինք: Ղասի ավարտից հետո էլ, սիրելի ընկերներս հետ չհանդիպելու համար, օգտվելով բազմությունից, ուղիղ տուն գնացի: Իրականում թե ինչքան էի սիրում նրանց, հասկացա, երբ իմացա, որ հայ եմ: Միակ մտավախությունս այն էր, որ այդ «առանձնահատկություն» պատճառով մեր ընկերությունը չվատանա և ամենալավ ընկերներիս չկորցնեմ:

Երեկոյան, ընթրիքից հետո, դարձյալ թաքնվեցի հայրիկիցս: Սենյակումս կարդում էի: Սակայն մեծ սենյակում մորս հետ խոսող հորս ծայնը կարծես կողքիս նստածի պես լսվում էր: Նամանավանդ բոլոր արթնազ տղամարդիկ բարձր ծայնով են խոսում, հայրս էլ դրա լավագույն օրինակն էր:

- Հա՛, դարբին Ռայիֆի արածից տեղյա՞լ ես:



Մայրիկիս ուղղված այդ հարցից, գիրքը թողնելով, ակնաջներս սրեցի:

- Ի՞նչ է արել որ, - հորս հարցին հարցով պատասխանեց մայրս:

- Ի՞նչ պետք է աներ, փորձել է Բիլլալին մեր վաճառած ընկույզի այգու սահմանը փոխել, խեղճ մարդու դաշտի վրա հարձակում է գործել:

Մայրս շատ գայրացավ:

- Այդ մարդը ծերանալով կարծես խելքը թեցնում է: Ընտանիք-երեխա նույնիսկ չունի: Դեռևս ունեցվածքի հետևից է վազում:

Հորս ու մորս լսելիս անհամբերությունից սիրտս կարծես կանգ էր առնում: Արդյո՞ք հայրս իմացել է, որ Բիլլալ քեռին հայ է: Այդ աստիճանի նյարդանալու պատճառը դա՞ է:

Մինչև ես նման մտքերով էի տարված՝ հայրս հաստատեց մորս վերջին խոսքերը:

- Իրականում ցնդել է: Դու հիմնական խնդիրը չգիտես...

Անհանգստությունից սկսեցի դողալ: Նշանակում է՝ հայրիկիս ասած «հիմնական խնդիրը» այն է, որ իմացել են Բիլլալ քեռու հայ լինելու մասին:

Հայրս շարունակեց իր խոսքը:

- Հիմնական խնդիրն այն չէ, որ այդ ծեր հիմարը փորձում է փոխել սահմանը: Բիլլալին խաբեբայության մեջ է մեղադրել...

Մինչ ես անհամբեր սպասում էի, թե հայրս խոսքն ուր կտանի, մայրս միջամտեց:

- Ինչպե՞ս: Ո՞րն է խեղճի խաբեբայությունը:

Նշանակում է հայրս իմացել է իրողությունը: Արդեն դրանում վստահ էի:

Հայրս պատասխանեց մորս:

- Ի՞նչ պիտի լինի, ասում է քեզ համբերեցի ես ներկայացնում, բայց իրականում հայ ես...

Այդ, հայրս իրականությունն իմացել է: Աստված իմ, ո՞վ գիտի, թե այդ խեղճ մարդը որքան է հիասթափեցրել հորս: Արդեն որևէ բան չէի գգում, չէի մտածում, միայն ջանում էի լսել հորս խոսքերը:

Հորս ծայնն արդեն շատ բարձր էր:

- Հա՛, այդ դարբին Ռայիֆը իրակա՞նում գծվել է: Կարծես մենք չգիտե՞ինք: Գյուղացին չգիտե՞ր: Նույնիսկ նրանց այս գյուղ քերող մարդը՝ ես, չգիտե՞մ թե համբերեցի՞ն ինչ է, հա՞յն ինչ է: Կարծես ես իմ տունը, այգիս մտերիմ ընկերոջս տալով դրանից տեղյակ չէի: Կարծես գյուղի բնակիչները դրանից տեղյակ չէին: Ամեն ինչ միայն այդ հիմա՞րը գիտե՞ր, հա՞...

Հորս նյարդերը լավ խանգարվել էին: Հարցից անտեղյակ մեկը կկարծեր թե մորս վրա է բարկացել: Ես գիտեի, որ մորս վրա չի բարկանում, բայց դեռևս չէի պատկերացնում, թե իրականում ում վրա է բարկանում: Ավելի ճիշտ՝ լավ շփոթված էի: Արդեն ի վիճակի չէի մեկնաբանելու, միայն ջանում էի լսել:

- Համբերեցի լինելը, հայ լինելը կամ որևէ այլ ծագում ունենալը մե՞ղք է: Ինչքան անիմաստ է պարծենալ ազգությանը, որը մեր կողմից չի ընտրվել, այլ Աստծու կողմից է որոշվել, այնքան էլ անիմաստ է մարդուն մեղադրել իր ազգության համար:

Մայրս ևս որոշ չափով հորս հանգստացնելու և իր մտքերն արտահայտելու համար հորս խոսքը կտրեց:

- Հարյուր տոկոս ցնդել է այդ դարբին Ռայիֆը: Իսկ գյուղի տարեցների խորհուրդը այդ հարցում ի՞նչ որոշում կայացրեց:

Այդ ժամանակ ավելի լավ լսելու և հորս դեմքի արտահայտությունը տեսնելու համար անձայն դուռը փոքր բացեցի: Հայրս մորս չպատասխանելով՝ մի սիգարետ վառեց: Ծուխը թոքերը քաշելով, դուրս փչեց: Հետո շրջվեց մորս կողմը, ով անհամբեր սպասում էր պատասխանին:

- Ի՞նչ որոշում կարող էին ընդունել, որ: Իսկույն այնտեղ Ռայիֆին ստիպեցին ներողություն խնդրել Բիլլալից: Պահանջեցին, որ վաղը սահմանը նախկին դրությամբ քերի: Եթե մեկ անգամ ևս նման խնդիր առաջանա, գյուղի տարեցների խորհրդի որոշմամբ դարբին Ռայիֆի ունեցվածքը գնվելու է, իսկ իրեն վտարեն գյուղից:

Մայրս ուրախության ճիչ արձակեց:

- Փա՛ռք մեր տարեցներին: Նրանցից միայն դա էր սպասելի: Ո՞նց էլ չլինի Բիլլալի ոտնահարված պատիվը որոշ չափով վերականգնվեց:

Եթե չամաչեի, իրական ուրախության ճիչը ես կարծակելի: Հորս շատ էի սիրում: Սակայն վստահ էի, որ սրանից հետո էլ ավելի կսիրեմ: Բացի դրանից սիրում էի գյուղս, ճշմարտություն սիրող գյուղի բնակիչներին, մեր հարգարժան մեծերին և պատիվ էի գգում, որ նման գյուղի բնակիչ եմ: Որովհետև նրանք ինձ իմ ամենամտերիմ ընկերներիս և Բիլլալ քեռուն վերադարձրեցին: Այժմ կարող էի քնել և ամենալավ երագները տեսնել:

Թուրքերենից բարգանեց
ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆԸ

1 թուրքերեն "amca" բառը, որ իր առաջին իմաստով նշանակում է հորեղբայր, օգտագործվում է նաև որպես մեծին դիմելու հարգալից ձև՝ «քեռի»:

2 Թուրքիայի չերքեզական գյուղերում պահպանվում է այն համակարգը, որ գոյություն ունի Հյուսիսային Կովկասում մինչև 1864թ. մեծ գաղթը. այն է՝ գյուղի խնդիրները կարգավորում է տարեցների (աքսաթալների) խորհուրդը՝ խասեն:

Հայր Անդրանիկ ծ.վ. Այվազյան.

«ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐԻ ՄՐՏՈՒՄ ԲՈՑ ԿԱ...»

«Հայերն այսօրը» շարունակում է անդրադառնալ իսլամացած հայերի խնդրին և զրուցել այն մարդկանց հետ, որոնք այս կամ այն կերպ առնչվել են նրանց հետ: Պատմում է Կաթողիկե եկեղեցու Սիրիայի Զեզիրեի շրջանի առաջնորդ հայր Անդրանիկ Ծ.Վ. Այվազյանը:

- 13-14 տարի առաջ էր, երեկոյան՝ մոտավորապես ժամը 10:30-ին, ինչ-որ մեկն ուժեղ թակում էր մեր եկեղեցու դուռն ու գոռում: Երբ դուրս եկանք, տեսանք, որ մի ծերունի, լավ կանաչ հագնված, գոռում էր՝ հայ եմ ուզում, հայ եմ ուզում: Երբ մոտեցանք նրան, ասաց, որ ուզում է մի հայ վարդապետի, քահանայի, պատասխանատուի, ինչ-որ մեկի հետ խոսել: Հարցրի՜ ի՞նչ ես ուզում, ասաց՝ ուզում եմ իմ ներսի կրակը «հաղորդել»:

Ու սկսեց պատմել. «Անունս Օստա Մուսա է, Ամուղա ավանից եմ: Մինչ օրս կարծում էի, որ իմ քուրդ հայրն իմ հայրն է: Բայց մայրս, հոգին չավանդած, ինձ կանչեց ու ասաց՝ Մուսա՛, ես արդեն «մեկնում» եմ և ուզում եմ քեզ մի գաղտնիք ասել: Քո քուրդ հայրը քո հայրը չէ, նա քո հոր, քո գերդաստանի մարդասպանն է:

Կարծես երկինքը փուլ եկավ գլխիս, ոչինչ չէի տեսնում, ոչինչ չէի հասկանում: Եթե «հայրս» ողջ լիներ՝ կսպանեի:

Անցյալը փոխել չեմ կարող, բայց շատ բաներ շտկել ինձանից է կախված: Ու հիմա, երբ գիտեմ որ հայ եմ, ուզում եմ, որ անմիջապես իմ գավակները, թռնիկները, ես հայանանք»:

Ես կնքեցի և՛ նրան, և՛ նրա գավակներին ու թռններին:

Այս դեպքից հետո Ամուղա ավանում մի քանի ընտանիք սկսեցին խոստովանել, որ իրենք հայ են: Եթե առաջ վախի, սարսափի մեջ չէին կարողանում իրենց ու լինել բարձրաձայն, կամաց-կամաց սկսեցին համարձակություն ձեռք բերել: Սկսեցին իրենց անունները հայացնել, մեկը նույնիսկ կարողացավ իր մահմեդական ազգանունը հայացնել:

Հետո Կամիշլիի տարբեր գյուղերից ու ավաններից մարդիկ սկսեցին գալ ու ասել, որ իրենք էլ են հայ:

Մի անգամ էլ Հասաբե քաղաք էի գնացել, երբ ինձ ասացին, որ ճապուռ ցեղախմբի անդամներն ուզում են տեսնել ինձ: Երբ հանդիպեցինք, նրանք ասացին, որ իրենց ցեղախմբի բժիշկը երեկ է մահացել, իսկ հոգին չավանդած հետևյալ խնդրանքով է դիմել. «Ես Ձեզ հետ որպես մուսուլման եմ ապրել, բայց վերջին փափագս է՝ թաղեք ինձ հայկական գերեզմանոցում և հայկական ծեսով»:

Ու հիմա իրենք չեն կարող նրա խնդրանքը չկատարել: Մենք հայկական ծեսով թաղում կատարեցինք: Պատկերացնո՞ւմ եք, թափոնի հետևից հարյուրավոր մեքենաներով իրենց բժշկին հրաժեշտ էին տալիս ցեղախմբի շեյխեր, ղեկավարներ: Բոլորն այնքան երջանիկ էին, որ կարողացան իրականացնել այս մարդու փափագը, վերջին ցանկությունը:

Անկարելի է տեսնել այդպիսի իրավիճակ ու անտարբեր մնալ: Այսօրինակ

պատմությունները, որոնք անգամ ամենագուսակ մարդկանց աչքերից արցունքներ են կորզում, շատ են:

Սրանից 6 ամիս առաջ մեկ օրվա ընթացքում 17 մկրտություն եմ արել:

Արդեն 7-րդ տարին է, որ դիմել եմ Հայաստանի կառավարությանը, որ այդ մարդկանց կամ Արցախ ուղարկեն կամ Հայաստանի որևէ գյուղում բնակվելու իրավունք տան: Ատում են՝ այո, բայց առայժմ ոչ մի տեղաշարժ:

Նրանք հրաշալի արհեստավորներ են, գյուղատնտեսներ, կարող են օգտակար լինել Հայաստանին: Նրանց սրտում բոց կա, ուզում են կորցրած տարիները վերադարձնել, շահել և ցույց տալ, որ իրենք իսկական, մաքուր հայ են:

Իսրայելը Հաբեշտանից խափշիկներ (սևամորթներ) է բերում ու բնակեցնում իր երկրում զուտ այն պատճառով, որ ընդունել են իրենց կրոնը: Իսկ գտարյուն հայերին, ովքեր 99 տարի համբերել են, որպեսզի կարողանան արտահայտվել, ասել, որ հայ են՝ հայրենիքը նրանց դեռ չի ընդունում:

Ափսոս, որ հայ ազգը երբեք հեռատես չի եղել, ինչն էլ փաստում են մեր պատմության ցավալի էջերը:

Միրտա ցավում է, որ այդ ընտանիքներից մեկը Բուլղարիա գնաց, մյուսը՝ Քուրդիստան, մի ընտանիք էլ՝ Պոլիս: Մյուսները տակավին սպասում են, որ մենք պիտի օգնենք: Այս է մեր իրավիճակը:

Անկախ եկեղեցական պատկանելությունից՝ մենք հայաստանյան եկեղեցու և մեր հայրենիքի գավակն ենք: Հայրենասիրությունը միայն լուզուհուհու է չի սահմանափակվում, հայրենասիրությունը խոսքերով չի արտահայտվում:

Հայաստանը մոտ 30 հազար քառակուսի կմ տարածք ունի, եթե 3 միլիոն կարողանում է «ապրեցնել», աշխարհի վե՞րջը պիտի լինի, եթե 300 հոգի ավելանան:

Երբ համշենահայը ասում է՝ ես հայ եմ, բայց մուսուլման եմ մնալու, և մենք նրան ընդունում ենք որպես հայ: Իսկ իսլամացած հայն ասում է՝ ես հայ եմ, պատրաստ եմ մկրտվելու և քրիստոնեություն ընդունելու, հակառակ իր կյանքին սպառնացող վտանգներից, մենք նրանից երես ենք թեքում: Մի՞թե սա արդարացի է:

Շատերն են ինձ հարցնում, թե անվերապահորեն կարելի՞ է նրանց հավատալ, վստահել:

Իմ պատասխանը հստակ է՝ միանշանակ, տասնյակ տարիներ ի վեր ի՞նչ շահ ունեն իրենց ինքնությունը բացահայտելու: Ընդհակառակը, վտանգեցին իրենց կյանքը, ապահովությունը, շատերը կորցրեցին իրենց աշխատանքը, խզվեցին հարևանների հետ հարաբերությունները: Մարդիկ նրանց նայում են որպես գլավուր, անհավատ:

Իսկ մենք կարող են այդ մարդկանց օգնել, այդ մարդկանց հայ պահել, բայց պետությունը ոչինչ չի անում, ի՞նչ է, Սիրիա՞ն պետք է նրանց հայությունը փաստի:

... Ես պետք է մահանամ և աչքերս պիտի չտեսնեն այս «բեկորների» մուտքը Հայաստան...
Պատրաստեց Լուսինե Արրահամյանը

Կ Ո Չ

Հարգելի հայրենակիցներ, «Ձայն համշենական» թերթի ընթերցողներին, Լրատվական ռադիոյի (Lratvakan.am) (FM106.5) «Համշենական զրուցարան» հաղորդաշարի իմ ունկնդիրներին, ինչպես նաև համշենցի հայերի անցյալով ու ներկայով հետաքրքրվող շատ-շատերին հայտնի է, որ ես երեքուկես տասնամյակ է ուսումնասիրում եմ համշենցի հայերի պատմությունը, ազգագրությունը, բանահյուսությունն ու բարբառը, փորձում եմ աջակցել նրանց ինքնաձևանջման ու հայապահպանության ջանքերին: Հայաստանում, Աբխազիայում, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում, ինչպես նաև Ղազախստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում և Թուրքիայում բնակվող քրիստոնյա ու մահմեդական համշենցի հայերից տարիների ընթացքում հավաքել եմ բազմաթիվ նյութեր, որոնց մի մասը հրատարակել եմ, մյուսների վրա դեռ անհրաժեշտ է տքնաջան աշխատել:

Իմ միջոցներով շրջագայելով Աբխազիայում և Կրասնոդարի երկրամասում, որոնել-գտել եմ համշենցի ֆիդայիներից և Եղեռնի վերապրողներից մնացած անտիպ հուշագրություններ, հին, եզակի լուսանկարներ: Ձեռք եմ բերել նաև տասնամյակներ առաջ տարբեր մտավորականների կատարած բանահյուսական գրառումների տետրեր, որոնցում ամփոփված են Համշենի բարբառով ժողովրդական բառ ու բանի հազարավոր նմուշներ:

Հարգելի հայրենակիցներ, դեռ մի քանի տարի առաջ եռանդով լի էի և հավատում էի, որ այդ ամենը կկարողանամ հրատարակել ու կորստից փրկել, բայց այժմ, հասկանալի պատճառներով, ինձ համար դժվար է թերթը միայնակ հրատարակելուն և տպաքանակը բաժանելուն զուգահեռ, հավաքածու ձեռագիր նյութերը վերածնել, տեքստերը համակարգչով շարել, խմբագրել ու սրբագրել, ճշտել ու ծանոթագրել, մի խոսքով՝ հրատարակության պատրաստել, ուստի անհրաժեշտ է ունենալ զոնտ մեկ վճարովի աշխատակից, նաև՝ գրքերի տպագրության համար գումար:

Բացի այդ, պետք է նաև գրքեր գրել հատուկ Թուրքիայի, Միջին Ասիայի և Ռուսաստանի համշենցի հայերի համար, դրանք թարգմանել թուրքերեն և ռուսերեն, հրատարակել, ինչը նույնպես զգալի նյութական միջոցներ է պահանջում:

Ես չեմ անդրադառնում իմ երազանքին՝ Երևանում համշենահայությանը նվիրված թանգարանի և գիտահետազոտական կենտրոնի ստեղծմանը, որտեղ կհանգրվանեին տարբեր մարդկանց մոտ պահպանված ազգագրական առարկաները, թանգարանային արժեք ներկայացնող իրերը, ընտանեկան հիշատակներն ու լուսանկարներն այլոցն, կյանքից հեռացած մեծերից մնացած մեղայներն ու պատվոգրերը, հուշատետրերը, նամակները, նաև իմ հավաքածուները, թեմային առնչվող տարալեզու հարյուրավոր գրքերը, ամսագրերն ու թերթերը, հազարավոր լուսանկարները և այլն:

Հասկանալի է, որ այս ծրագրի իրականացման համար մեծ գումար է հարկավոր, բայց զոնտ վերոհիշյալ անտիպ նյութերը հրատարակելու համար, կարծում եմ, նյութապես աջակցելու հնարավորություն ունեն Հայաստանի և Սփյուռքի շատ հայեր, այդ թվում՝ Սուխումից մինչև Սոչի, Տուրքիա և Անապա ձգվող ծովեզերքի քաղաքներում ու գյուղերում, նաև Կրասնոդարում ու Մոսկվայում բնակվող համշենահայերը: Ես ոչ ոքի օգնություն չեմ դիմում, բայց բոլոր բարերարները պիտի հասկանան, որ ինձ համար անհնար է և՛ գիշեր-ցերեկ հայագիտական ուսումնասիրություններ կատարել, շրջագայել Թուրքիայի սարուձորներով, և՛ միաժամանակ գործարարությամբ զբաղվել, որպեսզի «Ձայն համշենական» թերթի համար նոր համակարգիչ ու այլ սարքեր գնելու, նաև գրքերս հրատարակելու դրամական միջոցներ վաստակեմ:

Ժամանակն է, որ Հայաստանի և Սփյուռքի հայերից շատերը, զոնտ Ցեղասպանության 100-րդ տարելիցի օրերին, խոսքից անցնեն գործի: Օգնության գումարները կարող եք փոխանցել «ՎՏԲ-Հայաստան Բանկի» («ՎՏԲ - Армения Банк») հետևյալ հաշվեհամարին:

ՀՀ դրամ 16048072598700

ՄԵՐԳԵՑ ՎԱՐԴԱՆՅԱՆ
«Ձայն համշենական» թերթի
գլխավոր խմբագիր

«ՀԱՄՇԵՆԱԿԱՆ ՁՐՈՒՑԱՐԱՆ»
Մեր գեյ Վարդանյանի
հեղինակային հաղորդաշարը Լրատվական ռադիոյի եթերում
կարող եք լսել յուրաքանչյուր
չորեքշաբթի՝ ժամը 17.20-ին, և հինգշաբթի՝ ժամը 13.20-ին:
Լրատվական ռադիո FM 106.5 Lratvakan.am

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՄԵՐԳԵՑ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Հեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարգիչ հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեքենայի միջոցով հղումը «Ձայն համշենականին» պարտադիր է: Հրատարակվում է 2004թ. օգոստոսից: Տպագրվում է «ՆՏ Հոլդինգ» ՍՊԸ-ում:
"ДЗАЙН АМШЕНАКАН" (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации "АМШЕН" (г. Ереван),
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. "HAMSHEN" Compatriotic-charitable public organization (Yerevan).
"DZAYN HAMSHENAKAN". Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org